ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 02/2026/Բ/Վ

ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԸ ԱՆՓՈՓՈԽ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 11 հունիսի 2026 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Արմեն Մարուխյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի մայիսի 12-ին Հանձնաժողով մուտքագրված՝ քաղաքացի Ավետիք Չալաբյանի դիմումը՝ Հանձնաժողովի՝ 2026 թվականի ապրիլի 27-ի թիվ 07/2026/Վ/Վ որոշումը վերացնելու, վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու և վարքագծի կանոնների խախտման առկայությունը արձանագրելու վերաբերյալ (այսուհետ՝ Դիմում-բողոք).

ՊԱՐԶԵՑ

1. Դիմում-բողոքի նախապատմությունը՝

1.1 2026 թվականի ապրիլի 21-ին Հանձնաժողովում մուտքագրվել է քաղաքացի Ավետիք Չալաբյանի դիմումը՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից վարքագծի կանոնների խախտման փաստի առնչությամբ վարույթ հարուցելու և վարքագծի կանոնների խախտման առկայությունը արձանագրելու դիմումը (այսուհետ՝ Դիմում):

1.2 Հանձնաժողովը, ուսումնասիրելով Դիմումը և կից նյութերը 2026 թվականի ապրիլի 27-ին կայացրել է «Վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթի հարուցումը մերժելու մասին» թիվ 07/2026/Վ/Վ որոշումը (այսուհետ՝ Որոշում):

1.3 2026 թվականի մայիսի 12-ին Հանձնաժողով է ստացվել Բողոքը, որի հիման վրա Հանձնաժողովի կողմից 2026 թվականի մայիսի 13-ին հարուցվել է թիվ 02/2026/Բ/Վ բողոքարկման վարույթը:

1.4 2026 թվականի մայիսի 15-ին թիվ 01/1382-2026 գրությամբ բողոքարկման վարույթ հարուցելու մասին որոշումը փոստային ծառայության և էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել է Ավետիք Չալաբյանին՝ միաժամանակ առաջարկելով ներկայացնել լրացուցիչ պարզաբանում վարույթի շրջանակում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ: Ավետիք Չալաբյանի կողմից գրությունը ստացվել է 2026 թվականի մայիսի 19-ին (հիմք՝ էլեկտրոնային հավաստում): Վերջինիս կողմից լրացուցիչ պարզաբանում չի ներկայացվել:

2. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները՝

Բողոքով ներկայացվել են հետևյալ հիմնավորումները.

2.1 «...2026 թվականի ապրիլի 17-ին հանդես գալով ՀՀ Ազգային ժողովում, Նիկոլ Փաշինյանը, դիմելով այլ քաղաքական ուժերին՝ ընդդիմադիր քաղաքական ուժերին, վերջիններիս անվանել է «շուն ու շանգյալ», ապա հավելել է, եթե «Ուժեղ Հայաստանը, Հայաստան դաշինքը ու ԲՀԿ-ն անցնեն խորհրդարան, նշանակում ա, որ ես իմ մտքով անցկացնեմ, որ Հայաստանի Հանրապետությունում էդքան շուն ու շանգյալ կա, որ կարա իրանց օգտին քվեարկի»:

Նման անթույլատրելի արտահայտություններով, խախտելով զսպվածության ու քաղաքական անաչառության սկզբունքները, Նիկոլ Փաշինյանը վիրավորել է թե՛ վկայակոչված քաղաքական ուժերին, թե՛ վերջիններիս ձայն տված կամ վերջիններիս օգտին քվեարկել պատրաստվող անձանց, ինչն ակնհայտորեն դուրս է կարծիքի արտահայտման սահմանադրական իրավունքի շրջանակներից և կոպտորեն խախտում է Վարքագծի կանոնագիրքն ու Հանրային ծառայության մասին օրենքը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածը, դրա երկրորդ կետով սահմանված քաղաքական խոսքի սահմանափակման ծավալը:

Նման արտահայտություններով վիրավորանք է հասցվել ընտրողների, ընտրողների խմբի, ինչպես նաև մի շարք քաղաքական ուժերի, այսինքն՝ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձի

կողմից ենթարկվել են վիրավորանքի և խտրական մոտեցման՝ ի հակադրումն գործով նորմատիվ-իրավական ակտերով սահմանված պահանջների:

Ներկայացված դիմումի առնչությամբ 27-4-2026թ. կայացված N 07/2026/Վ/Վ Որոշմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝

1. առանց պատշաճ վարչարարություն իրականացնելու,
2. առանց վարույթի մասնակիցներին լսելու,
3. առանց դիմումի մեջ նշված անձանց վարույթի մասնակից դարձնելու,
4. առանց վեջիններիս լսելու,
5. առանց բազմակողմանի և ամբողջական քննություն իրականցնելու,

թույլ է տվել մի շարք էական խախտումներ, անթույլատրելի ձևակերպումներ, որոնք ոչ միայն չեն համապատասխանում հռչակված սկզբունքներին՝ օրինականության սկզբունքին և իրավունքների պաշտպանության կառուցակարգերին, այլև խաթարում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ որպես անկախ մարմնի և որպես վարչական մարմնի՝ անկախ գործունեության և անկողմնակալության սկզբունքները:

Մասնավորապես՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը առանց վկայակոչված գործողությունների կատարման, կատարել է կամայական եզրահանգումներ և եզրակացություններ, ըստ որոշման ուսումնասիրության, և այդ չհաստատված եզրահանգումների հիման վրա կայացրել է որոշում:

Հարկ ենք համարում դրանց անդրադառնալ առանձին-առանձին.

1) Նախևառաջ, ըստ Որոշման Հանձնաժողովը պարտավոր էր վարույթ հարուցել և ըստ Հանձնաժողովի վկայակոչած հիմնավորումների՝ արձանագրել վարքագծի կանոնների խախտման բացակայությունը, թեև սա կլիներ, մեր գնահատմամբ, փաստերին տրված սխալ իրավական գնահատական, սակայն առնվազն ընթացակարգային նորմերը պահպանված կլինեին,

2) Հաջորդիվ, հենց ԿԿՀ-ն է իր որոշման 27-րդ էջի երրորդ պարբերությամբ և 28-րդ էջի երրորդ պարբերությամբ, մի դեպքում ուղղակիորեն, մի դեպքում՝ անուղղակիորեն հաստատել, որ օգտագործված արտահայտությունները «առերևույթ վիրավորական են», և ԿԿՀ-ի համար մտահոգիչ է դրանց գործածումը: Այսինքն, ունենալով առնվազն առերևույթի

ապացուցողական շեմը հաղթահարող արտահայտությունների վերաբերյալ հաստատված տվյալ, Հանձնաժողովը կարիք չի գտել վարույթ հարուցելու և պարզելու թեկուզև այդ արտահայտությունները գործածած անձից իր նպատակները և շրջանակը, թե ում է այն կոնկրետ հասցեագրվել:

3) Միայն վերոգրյալով արդեն իսկ բավարար էր վարույթի հարուցման համար, սակայն, անկախ այդ հանգամանքից, վկայակոչում ենք, որ ԿԿՀ-ի կողմից դեպքին տրված իրավական գնահատականները ինքնին խնդրահարույց են, մասնավորապես՝

3.1 Նիկոլ Փաշինյանը, ի տարբերություն, Որոշմամբ վկայակոչված քաղաքական ուժերի, հանդիսանում է ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ, և հետևաբար, վերջինիս համար, որպես հանրային ծառայող, կանոնագիրքը կրում է պարտադիր ուժ, ի տարբերություն այն քաղաքական ուժերի, որոնց և որոնց ընտրողներին վերջինս ուղղակիորեն վիրավորել է:

3.2 Նիկոլ Փաշինյանը չի վերարտադրել որևէ ուղիղ խոսք, հղում չի տվել որևէ խոսքի, այլ կատարել է եզրահանգում, հետևաբար վերջինիս արտահայտությունները որևէ կերպ չեն կարող համարվել հղում այլ քաղաքական ուժի, այլի դեպքում էլ, անգամ, վարքագիծը պիտի համարվեր խախտումով կատարված՝ պայմանավորված նախորդ պարբերությամբ ներկայացված Կանոնագրքի՝ հանրային ծառայողի համար պարտադիր լինելուն:

3.3 Ըստ ԿԿՀ Որոշման էության՝ Նիկոլ Փաշինյանը «հայելային անդրադարձ է կատարել», մինչդեռ վկայակոչված ձայնագրությունները (որոնք էլ, իրենց հերթին, առանց վարույթի չէին կարող ուսումնասիրվել, մինչդեռ ուսումնասիրվել են) չեն կատարվել որևէ քաղաքական ուժի ղեկավարի, ղեկավար կազմի կամ գործադիր մարմնի անդամների կողմից, հետևաբար անգամ տեսաձայնագրությունների բովանդակության հաստատման դեպքում (որը ևս կատարված չէ) անթույլատրելի է Վարչապետի պաշտոնը զբաղեցնող հանրային ծառայողի կողմից նման արտահայտությունների օգտագործումը ոչ միայն քաղաքական ընդդիմության, այլև ընտրողների նկատմամբ առհասարակ:

3.4 Սրանից զատ, եթե ԿԿՀ վկայակոչված ձայնագրությունները վերաբերելի են միայն մեկ քաղաքական ուժի, մինչդեռ Նիկոլ Փաշինյանի կողմից կատարված արտահայտությունները շոշափում են միանգամից երեք քաղաքական ուժի, ինչպես նաև նրանց ընտրողներին,

3.5 Վերջապես, առավել ակնհայտ խնդրահարույց է, երբ Սահմանադրությամբ տրված լիազորության իրացման հիման վա ստեղծված անկախ մարմինը, առանց լսելու Ն.Փաշինյանին, առանց վերջինիցս բացատրություններ ստանալու, կատարել է նրա մտքերի մեկնաբանություններ, նրա փոխարեն ըստ էության դիմում ներկայացնողներին տվել է բացատրություններ, նրա փոխարեն ներկայացրել է հիմնավորումներ և կատարել եզրակացություններ:

Վկայակոչված իրավական և փաստական հանգամանքներով պայմանավորված՝ ակնհայտ է դառնում, որ առկա է վարույթի հարուցումը մերժելու մասին որոշման վերացման և վարույթի հարուցման անհրաժեշտություն՝ ապահովելու վարչական մարմնի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 5-րդ, 10-րդ, 37-րդ և 38-րդ հոդվածներով սահմանված երաշխիքներն ու կառուցակարգերը:»:

(...)

2.2 Դիմում-բողոքով Ա.Զալաբյանը Հանձնաժողովից պահանջել է՝

1. վերացնել վարույթի հարուցումը մերժելու մասին Հանձնաժողովի՝ 27.01.2026թ. կայացված թիվ 07/2026/Վ/Վ որոշումը,

2. հարուցել վարքագծի կանոնների խախտման վարույթ,

3. արձանագրել վարքագծի կանոնների խախտման առկայությունը Նիկոլ Փաշինյանի հրապարակային խոսքում:»:

3. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

3.1 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **Հանձնաժողովը քննում և լուծում է** պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների

ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ **դիմումներ:**

3.2 Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարույթ կարող է հարուցվել՝ յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա, իսկ քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի դիմումի հիման վրա:

3.3 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է **համապատասխան վարույթ:**

3.4 Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե՝

1) դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ առկա չեն վարույթ հարուցելու հիմքեր.

2) դիմումում բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունից.

3) սույն օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում դիմումը ներկայացրել է ոչ շահագրգիռ անձը.

4) նույն անձի վերաբերյալ նույն հիմքով առկա է Հանձնաժողովի եզրակացություն:

3.5 Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարույթ հարուցելու մասին որոշումն ընդունում է դիմումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

3.6 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովն իրավասու է դիմողից պահանջելու տասնօրյա ժամկետում քննարկվող հարցի առնչությամբ ներկայացնել լրացուցիչ նյութեր, իսկ սույն գլխով նախատեսված համապատասխան պաշտոն զբաղեցնող անձից՝ գրավոր պարզաբանում՝ դրան կցելով իր փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր:

3.7 Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարույթի շրջանակում Հանձնաժողովն իրավասու է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կազմակերպություններից կամ դրանց պաշտոնատար անձանցից, այլ անձանցից պահանջելու և ստանալու Հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող ցանկացած նյութ, փաստաթուղթ կամ տեղեկություն, ինչպես նաև իր կողմից բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կամ համայնքային հիմնարկից, պետական կազմակերպությունից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու անցկացնել անվճար ուսումնասիրություններ, կատարելու անվճար փորձաքննություններ և ներկայացնելու դրանց արդյունքները:

3.8 Օրենքի 33-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարույթի արդյունքում խախտման կամ դեպքի վերաբերյալ ընդունում է եզրակացություն:

3.9 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին (...):

3.10 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող

դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ)։»։

3.11 Նույն օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով։ Օրենքով նախատեսված դեպքերում ակտը կարող է բողոքարկվել դատական կարգով միայն վարչական կարգով բողոքարկվելուց հետո։

3.12 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական կարգով բողոք կարող է ներկայացվել ակտն ընդունած՝

ա) վարչական մարմին.

բ) վարչական մարմնի վերադաս վարչական մարմին։

3.13 Օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական բողոքի քննարկումն իրականացվում է սույն Օրենքի II բաժնով սահմանված դրույթներին համապատասխան, եթե սույն բաժնով այլ բան նախատեսված չէ։

3.14 Օրենքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **վարչական բողոքը քննարկվում է բողոքարկված վարչական ակտի իրավաչափության տեսանկյունից,** իսկ հայեցողական լիազորության իրականացման դեպքում՝ նաև նպատակահարմարության տեսանկյունից։

3.15 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս առաջնորդվում է ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով։

3.16 Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է՝

ա) բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ճանաչելով վարչական ակտն անվավեր կամ առ ոչինչ կամ ընդունելով նոր վարչական ակտ.

բ) մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ։

3.17 Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող

անձանց վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» N 02-Ն որոշմամբ ընդունվել և 2024 թվականի ապրիլի 1-ից ուժի մեջ է մտել համապատասխան կանոնագիրքը (այսուհետ՝ Վարքագծի կանոնագիրք):

3.18 Վարքագծի կանոնագրքի 1-ին կետի համաձայն՝ (...) կանոնագիրքը հանրային ծառայության վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնների համախումբ է, որով պետք է առաջնորդվեն համապատասխան պաշտոն զբաղեցնող անձինք:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Ուսումնասիրելով ներկայացված Դիմում-բողոքը և դրա հիմքում դրված փաստական և իրավական հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ Դիմում-բողոքում ներկայացված հիմնավորումները չեն պարունակում այնպիսի նոր հանգամանքներ կամ իրավական փաստարկներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ Հանձնաժողովի կողմից կայացված Որոշումը վերանայելու համար:

Մասնավորապես, Ա.Զալաբյանի կողմից ներկայացված դիրքորոշումը չի պարունակում այնպիսի նոր փաստական տվյալներ, որոնք նախկինում չեն եղել Հանձնաժողովի գնահատման առարկա կամ որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Հանձնաժողովի կողմից կայացված Որոշման բովանդակության վերանայման վրա:

Անդրադառնալով բողոքարկման վարույթի շրջանակներում Ա.Զալաբյանի Դիմում-բողոքում նշված այն պնդումներին, համաձայն որոնց՝ Հանձնաժողովն առանց պատշաճ վարչարարություն իրականացնելու, առանց դիմումի մեջ նշված անձանց վարույթի մասնակից դարձնելու, առանց վերջիններիս լսելու, առանց բազմակողմանի, ամբողջական քննություն իրականացնելու, Հանձնաժողովը թույլ է տվել մի շարք էական խախտումներ, որոնք ոչ միայն չեն համապատասխանում Սահմանադրությամբ հռչակված սկզբունքներին, այլև խաթարում են Հանձնաժողովի՝ որպես անկախ մարմնի՝ անկախ գործունեության և անկողմնակալության սկզբունքները, Հանձնաժողովն արձանագրում է, որ հիշյալ պնդումները ամբողջովին անհիմն են և չեն բխում Հանձնաժողովի լիազորություններից, Օրենքի համապատասխան դրույթների բովանդակությունից ու դրանց համակարգային մեկնաբանությունից:

Հիշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ Հանձնաժողովը Օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված դիմումներով վարույթ հարուցելու հարցը քննարկելիս իրականացնում է ներկայացված դիմումների գնահատում՝ պարզելու, թե արդյոք առկա են «(...) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների **առերևույթ**[1]» խախտումների առկայության մասին վկայող իրավական և փաստական բավարար հիմքեր: Ըստ այդմ, Օրենքի համաձայն՝ Հանձնաժողովը պարտավոր չէ ցանկացած դիմումի հիման վրա հարուցել վարույթ, այլ լիազորված է 5 աշխատանքային օրվա ընթացքում քննարկելու՝ արդյոք դիմումով ներկայացվել են վարքագծի կանոնի առերևույթ խախտման փաստը հաստատող հիմնավորումներ և տեղեկություններ և ըստ այդմ՝ **միայն առերևույթ խախտման առկայությունը հաստատվելու պարագայում** հարուցել վարույթ:

Որոշմամբ Հանձնաժողովը քննարկել է Դիմումով ներկայացված փաստական հանգամանքները և դրանով ներկայացված տեսանյութերը համանման իրավիճակներում Հանձնաժողովի նախկինում արտահայտած դիրքորոշումների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերաբերելի նախադեպային իրավունքի համատեքստում՝ սահմանելով Հանձնաժողովի կողմից նախընտրական շրջանում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց խոսքի **առերևույթ** իրավաչափությունը գնահատելու չափանիշները: Ըստ այդմ, Դիմում-բողոքով ներկայացված պնդումներն առ այն, որ Հանձնաժողովը պետք է սկզբում հարուցեր վարույթ, այնուհետև քննարկման առարկա դարձներ խախտման առկայությունը, անհիմն և չպատճառաբանված է:

Բացի այդ, Հանձնաժողովն ընդգծում է, որ Օրենքի 30-րդ և 31-րդ հոդվածների կարգավորումներից բխում է, որ ենթադրյալ խախտման վերաբերյալ ստացված դիմումի քննարկման փուլում Հանձնաժողովի լիազորությունը վերաբերում է բացառապես վարույթ հարուցելու հարցի լուծմանը և չի ենթադրում առերևույթ խախտում թույլ տված անձին վարույթի մասնակցի կարգավիճակի վերապահում և նրան լսելու պարտականություն:

---

[1] Ընդգծումը՝ Հանձնաժողովի կողմից:

Միաժամանակ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ նույնիսկ հարուցված և Հանձնաժողովի կողմից քննվող՝ Օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված վարույթների համար օրենքով լսումների պարտադիր ընթացակարգ նախատեսված չէ, հետևաբար տվյալ վարույթները քննվում են գրավոր ընթացակարգով, որի պայմաններում վարույթի մասնակիցը իր դիրքորոշումը, առարկությունները և հիմնավորումները ներկայացնում է գրավոր պարզաբանումների միջոցով:

Այս համատեքստում Հանձնաժողովը, գնահատելով ներկայացված Դիմումով առկա հանգամանքները և արձանագրելով, որ վարույթ հարուցելու բավարար փաստական և իրավական հիմքեր առկա չեն, իրավաչափորեն մերժել է վարույթի հարուցումը: Ուստի Դիմում-բողոքում ներկայացված փաստարկներն առ այն, թե Հանձնաժողովը պարտավոր էր նախապես իրականացնել լսումներ կամ ապահովել անձի կողմից պարզաբանում ներկայացնելու հնարավորություն, հակասում են Օրենքի համապատասխան կարգավորումներին, չի բխում դրանց նպատակային ու համակարգային մեկնաբանությունից և այդ փաստարկները չեն կարող հիմք հանդիսանալ Հանձնաժողովի կողմից ընդունված Որոշումը ոչ իրավաչափ ճանաչելու համար:

Հաջորդիվ, անդրադառնալով Դիմում-բողոքում նշված այն պնդմանը, թե Հանձնաժողովն ուղղակիորեն և անուղղակիորեն հաստատել է, որ օգտագործված արտահայտություններն «առերևույթ վիրավորական են», այնուամենայնիվ վարույթ չի հարուցել և չի պարզել այդ արտահայտությունների նպատակները և շրջանակը, Հանձնաժողովը գտնում է, որ այն ևս հիմնավոր չէ: Մասնավորապես, Հանձնաժողովը նախ ընդգծում է, որ Հանձնաժողովի կողմից նախկինում ձևավորված դիրքորոշումներից[2], ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունից[3] հետևում է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 10-րդ հոդվածով պաշտպանվում են ոչ միայն հասարակության կողմից դրական ընկալվող կամ չեզոք արտահայտությունները, այլև այնպիսի գաղափարներն ու կարծիքները, որոնք կարող են

[2] Տե՛ս https://cpcarmenia.am/wp-content/uploads/2025/06/00-12.pdf

[3] Տե՛ https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57772&utm_source=chatgpt.com#%7B%22itemid%22:%5B%22001-57772%22%5D%7D. Տե՛ս https://hudoc.echr.coe.int/eng?i=001-57772&utm_source=chatgpt.com#%7B%22itemid%22:%5B%22001-57772%22%5D%7D

առաջացնել բացասական արձագանք հանրության շրջանում: Ըստ այդմ, միայն որևէ արտահայտության առերևույթ վիրավորական բնույթն անպայմանորեն չի կարող հանգեցնել վարքագծի կանոնի առերևույթ խախտման առկայության: Նշվածից ելնելով՝ Հանձնաժողովը Որոշմամբ գնահատման առարկա է դարձրել վիճարկվող արտահայտությունների և Ն.Փաշինյանի ամբողջ խոսքի բովանդակությունը, ձևը, դրանց կատարման համատեքստը, նպատակը, իրավիճակն ու պայմանները, որոնցում տվյալ արտահայտությունները կատարվել են, դրանց հնարավոր հասցեատերերը, վերջիններիս կարգավիճակը և Ն.Փաշինյանի խոսքին նախորդած վարքագիծը: Ընդ որում, նշված հանգամանքները Հանձնաժողովի կողմից գնահատվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից բխող՝ նախընտրական շրջանում խոսքի գնահատման նկատմամբ կիրառելի չափանիշների համատեքստում, որոնք կիրառելի են նաև Վարքագծի կանոնագրքի 36-րդ և 37-րդ կանոնների ենթադրյալ խախտման գնահատման շրջանակներում: Մասնավորապես, Հանձնաժողովը Որոշմամբ արձանագրել է, որ նախընտրական շրջանում ընտրություններին մասնակցող կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի անդամ հանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի խոսքը Վարքագծի կանոնագրքի տեսանկյունից կարող է ոչ իրավաչափ համարվել միայն բացառիկ դեպքերում՝ երաշխավորելու համար նախընտրական շրջանում տարատեսակ կարծիքների ազատ արտահայտումն ու շրջանառությունը, ինչպես նաև հանրային պաշտոն չզբաղեցնող անձ չհանդիսացող քաղաքական գործիչների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ նախընտրական շրջանում հնարավորինս միատեսակ կանոնների կիրառելիությունը:

Այսինքն՝ վարույթի հարուցման հարցի քննարկման փուլում Հանձնաժողովը կատարել է ներկայացված փաստերի և կից նյութերի բավարար ուսումնասիրություն և դրանց հիման վրա ձևավորել իրավական դիրքորոշում վարույթ հարուցելու փաստական ու իրավական հիմքերի բացակայության վերաբերյալ: Հետևաբար, Դիմում-բողոքում նշված այն պնդումը, թե Հանձնաժողովը չի պարզել արտահայտությունների նպատակը կամ շրջանակը, հերքվում է Հանձնաժողովի Որոշման բովանդակությամբ և դրանում արտացոլված գնահատականներով:

Ինչ վերաբերում է Դիմում-բողոքով նշված այն փաստարկին, ըստ որի՝ Ն.Փաշինյանը հանդիսանում է բարձրաստիճան պաշտոնատար անձ և հետևաբար վերջինիս համար՝ որպես

հանրային ծառայող, Վարքագծի կանոնագրքով սահմանված պահանջները պարտադիր են, Հանձնաժողովն արձանագրում է, որ Որոշմամբ Հանձնաժողովը որևէ կերպ չի արձանագրել, որ ՀՀ վարչապետը կամ հանրային պաշտոն զբաղեցնող այլ անձինք սահմանափակված չեն Վարքագծի կանոնագրքի դրույթներով: Հանձնաժողովը Որոշմամբ միայն սահմանել է խոսքի այն դրսևորումները, որոնք կարող են հանգեցնել Վարքագծի կանոնագրքի առերևույթ խախտման՝ հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կիրառելի նախադեպային իրավունքը և համանման հանգամանքների առնչությամբ Հանձնաժողովի՝ նախկինում արտահայտած դիրքորոշումները:

Ինչ վերաբերում է Ն.Փաշինյանից պարզաբանումներ պահանջելու Ա. Զալաբյանի պնդմանը, Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում դրա անհրաժեշտությունը բացակայում է: Այսպես, նախ, Ն.Փաշինյանի հնչեցրած խոսքի նպատակը առերևույթ խախտման առկայության գնահատման շրջանակներում քննարկման ենթակա բազմաթիվ հանգամանքներից մեկն է, բացի այդ, խոսքը հնչեցնողի նպատակի գնահատումն իրականացվում է ոչ միայն տվյալ անձից պարզաբանում հայցելով, այլև նրա խոսքի բովանդակության, ձևի, ընդհանուր ենթատեքստի գնահատմամբ, ինչը Հանձնաժողովի կողմից իրականացվել է Որոշման շրջանակներում:

Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ վարույթի մասնակցի այն պնդումը, թե Վարքագծի կանոնագրքի պահանջների պարտադիր լինելն ինքնին բավարար է համապատասխան վարույթ հարուցելու և խախտման առկայությունն արձանագրելու համար, հիմնավոր չէ, քանի որ յուրաքանչյուր դեպք ենթակա է անհատական գնահատման՝ հաշվի առնելով դրա առանձնահատկությունները՝ որոշելու համար առերևույթ խախտման առկայությունը: Ընդ որում, տվյալ դեպքում կարևոր է մատնանշել, որ Որոշմամբ Հանձնաժողովն իրավաչափորեն ընդգծել է, որ տվյալ արտահայտությունները կատարվել են նախընտրական շրջանում, իսկ նախընտրական գործընթացը ենթադրում է թույլատրելի գնահատողական դատողությունների և քննադատության առավել լայն շրջանակ:

Դիմում-բողոքում բարձրացված 3.3-րդ և 3.4-րդ կետերով ներկայացված պահանջները արդեն իսկ քննարկվել են Հանձնաժողովի Որոշմամբ, դրանց վերաբերյալ Հանձնաժողովն

արտահայտել է համապատասխան դիրքորոշում՝ գնահատելով ներկայացված փաստական հանգամանքները, ձայնագրությունների բովանդակությունն ու դրանց համատեքստը:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ևս մեկ անգամ ընդգծել, որ վիճարկվող արտահայտությունները կատարվել են Ազգային ժողովում նախընտրական քարոզարշավի ընթացքում, որի պայմաններում անձանց խոսքի ազատությունը ենթակա է առավել լայն պաշտպանության: Մասնավորապես, դեռևս 2025 թվականի օգոստոսի 13-ի թիվ 07/2025/Վ/Վ եզրակացությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ խորհրդարանը քաղաքական բանավեճի առանցքային ամբիոն է, ինչպես նաև նշել է հետևյալը.

«(...) վարչապետն անուղղակի կերպով ընտրվում է խորհրդարանական ընտրությունների շրջանակներում, ուստի ՀՀ վարչապետը, հաշվի առնելով նաև, որ նա քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ է, պետք է օգտվի արտահայտման ազատության հատկապես լայն սահմաններից, որոնք, այնուամենայնիվ, չեն կարող նույնանալ պատգամավորական խոսքի արտահայտման ազատության առավել լայն շրջանակների հետ՝ նաև նկատի ունենալով ժողովրդավարական հասարակությունում խորհրդարանական խոսքի առանձնահատուկ կարևորությունը:»:

Այս հանգամանքին Հանձնաժողովը մանրամասն անդրադարձել է Որոշման շրջանակներում՝ ընդգծելով, որ քննարկվող դեպքում Ն.Փաշինյանի ելույթը կատարվել է Ազգային ժողովում ՀՀ կառավարության հնգամյա ծրագրի տարեկան կատարողականը ներկայացնելու շրջանակներում, միաժամանակ, այն զգալիորեն վերաբերել է Ազգային ժողովի՝ 2026 թվականի հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին: Այդպիսով Ն.Փաշինյանը օգտվել է «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ նախընտրական քարոզչության և «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով չարգելված այլ ժամանակահատվածում կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործող հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկություն ապահովելու «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված հնարավորություններից:

Ընդ որում, Հանձնաժողովը նաև արձանագրել է, որ Ն.Փաշինյանն իր խոսքում անդրադարձել է խորհրդարանական ընտրություններին մասնակցող երեք քաղաքական ուժերին և քննադատել դրանց՝ նշելով, որ Ազգային ժողովում այդ օրվա քննարկումներն իրեն ցույց տվին, որ խորհրդարանական ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած երեք ուժերը նույնանում են նախկինում իշխանությունը կազմած ուժերի հետ (մեջբերում՝ «էդ պատերազմի եռագլուխ կուսակցությունն իրականում ճշգրիտ նույնն ա նախկինների եռագլուխ կուսակցությանը»): Դրանից ելնելով՝ Ն.Փաշինյանը նշված քաղաքական ուժերից մեկին ուղղված քննադատությունները տարածել է նաև մյուսների նկատմամբ և արձանագրել, որ 2026 թվականի հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունները նշված ուժերի վերջին շանսն են, ուստի, ըստ Ն.Փաշինյանի, նշված ուժերը պետք է խորհրդարանական ընտրությունների արդյունքում չհավաքեն այնքան ձայն, որ անցնեն խորհրդարան՝ ըստ էության հղում տալով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի հրապարակած ձայնագրություններին, որոնցում, ըստ տեսանյութի, «Ուժեղ Հայաստան» կուսակցության ենթադրյալ անդամը կամ աջակիցը հիշատակում է նշված կուսակցության այլ ենթադրյալ աջակիցների միջև խոսակցությունը, որի շրջանակներում նրանցից մեկը մյուսին հանդիմանել է՝ «նշելով, որ ինչքան շուն-շանգյալ կա, բերել է գրանցել շտաբի վրա»: Հանձնաժողովը վերստին ընդգծում է, որ «շուն ու շանգյալ» արտահայտությունն օգտագործվել է բացասական գնահատական տալու՝ որոշակի արհամարհանք, անվստահություն կամ հեռավորություն արտահայտելու համար[4]:

Վերահաստատելով Որոշման շրջանակներում արտահայտած դիրքորոշումը, Հանձնաժողովը գտնում է, որ նախընտրական շրջանում Վարքագծի կանոնագրքի դրույթների խախտման կարող են հանգեցնել միայն խոսքի բացառիկ դրսևորումները, այն է՝ գռեհկաբանությունները, հայհոյախոսությունները, բռնության կոչ, սպառնալիք կամ արդարացում պարունակող խոսքը, ինչպես նաև ազգության, ռասսայի, կրոնական պատկանելիության, սեռի, տարիքի, առողջության և այլ անձնական կամ ասոցիալական բնույթի հատկանիշի հիմքով ատելություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրող խոսքը, իսկ տվյալ դեպքում Ն.Փաշինյանի խոսքը չի հատել իրավաչափության սահմանը, այն չի պարունակում Կանոնագրքի 36-37-րդ կետերի առերևույթ խախտման հատկանիշներ՝ նկատի

[4] Առավել մանրամասն, տե՛ս՝ Հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 27-ի թիվ 07/2026/Վ/Վ որոշում:

ունենալով, որ այն կատարվել է նախընտրական շրջանում՝ ընտրություններին մասնակցող կուսակցության անդամի (վարչության նախագահի) կողմից, վերաբերել է 2026 թվականի հունիսի 7-ին տեղի ունեցած ընտրություններին, առաջին հերթին նպատակ է հետապնդել քննադատելու քաղաքական հակառակորդներին, իսկ կիրառված վիրավորական արտահայտությունները հիմնվել են Հակակոռուպցիոն կոմիտեի հրապարակած տեսանյութում ներկայացված ձայնագրությունների վրա, կապակցվել են Ն.Փաշինյանի քննադատությանը և իմաստային առումով լրացրել են այն ու կարևորապես՝ չեն պարունակել հայհոյանք կամ գռեհկաբանություն:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ բացակայում են վիճարկվող Որոշման փոփոխման կամ բեկանման իրավական և փաստական հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քաղաքացի Ավետիք Չալաբյանի կողմից 2026 թվականի մայիսի 12-ին ներկայացված Դիմում-բողոքը մերժել՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ավետիք Չալաբյանին այն սահմանված կարգով հանձնելուն (հանձնված համարվելուն) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ